


Co K
1749

362

ԱՅՆ ԾԱԷՐՈՒ

ԱՎԼՈ
ԼՍՈՒՄ ԵՔ,
ՄԵՐ ՀՅՈՒՄՈՒՄՆ
Ե ԵՔ...

ՊՈԵՍ
ՊԱՏԱԿԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ



1938
Յ Ռ Ե Կ Ա Ն

891-995

Հ-29

30 MAY 2011

ԱՇՈՏ ՀԱՅԲՈՆ

ԱԼԼՈ՛, ԼՍՈՒԻՄ ԵՔ,
ՄԵՆՔ ՀՅՈՒՍԻՍՈՒՄՆ ԵՆՔ...

Պոեմ պատաճիների
համար



ՊԵՏՀԱՆՑ
ՀՀԿԳԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ
1988

.07. 2013

11882

Խորհրդային Միության Ստալինյան
բեմականության, քաջարի ընկեր
Ոստո Յուլեմփիչ Շմիդտին:

1

Մա մեր յերկիրն ե,
Գիտե՞ք, շատ հին ե:
Յերկիրը խնձոր՝
Վրան՝ սա՛ր ու ձոր,
Վրան՝ հող ու հանք,
Անտառ, դաշտ ու հանդ,
Թվկան անհատակ,
Յերկի՞նք կապուտակ,
Լճե՛ր բլուրեղլա,
Գետե՞ր վարարուն,
Անձրև ու յեղամ,
Չմե՛ռ ու դարո՛ւն...

2

Դառնում ե, դառնում
Յերկիրը կլո՛ր,
Շըշան ե անում
Արեի բոլոր:
Տարին անցնելիս
Նու հետ ե գալիս...
Պառւլտ ե անվերջ,
Անուն յերկնի մեջ:
Բլուր աստղերին կից,
Մեր շվաքի տակ
Լուսինն ել դրկից՝
Փոքրիկ մի գնդակ...
Յեզ միշտ միասին



59162.66

3

Անցնում են կարգով,
Յերկի'ը ու լուսին՝
Մեր տիեզերքով:
Տեր դաշճան մարդիկ
Ծովերին անթիվ,
Հակա հողերին
Մեր լերկըագնդի:
Բնությունը մեծ
Նրան լենթարկվեց...

3

Բալց մնում եր դեռ
Հեռու մի բեվեռ,
Յերկնքի տակին
Մի անհայտ անկուն.
Յեզ մարդու կամքին
Այն չեր լենթարկվում:
Բեվեռը անհայտ՝
Սառցադաշտ և հարթ:
Յերկու կիսադունդ
Բաժան ծովելով,
Նրանց արանքում
Խիստ սառուցներով
Մի ուղի կար փակ՝
Անհայտության տակ:
Այնտեղ չար և խիստ
Սառուցն եր հանգչում,
Յեզ բուքն անհանգիստ
Վոռնո՛ւմ, շառաչո՛ւմ:
Հաստ զրահ հաղած
Սառուցների տակ,
Ովկյանն ե պառկած

Խոր ու անհատակ,..
Հողերն ել հաղած
Մուշտակը փափուկ,
Սառցի տակ պառկած
Ննջում են տաքուկ:
Յեզ վորքա՞ն—վորքա՞ն
Շատ կղզիներ կան:
Ալղպիսի կղզիք
Քարտեղի վրա
Զեն լեղել, չկան:
Անմարդ, անբնակ
Սառել են մենակ...
Արել անուժ
Շողում ե անուշ:
Արեն աննման,
Հեքաթի նման
Լուսեր ե վառում,
Են սառ աշխարհում:
Դաշտերը սառցի
Փովում են անծիր,
Փալլում են պես—պես,
Հայելի վորպես,
Շողում են հանդարտ,
Վորպես աղամանդ:
Դաշտ և հորիզոն
Լցվում են լուսով,
Գույներ են ցանվում
Ու ծիածանվում:
Խոկ լերը հուսիսում
Գիշերն ե գալիս,
Խավարն ե հուսվում
Որեր ու ամիս:

Խավարը տիսուր
Իջնում ե հավետ,
Յեվ բուքն ե խաղում
Սառուցների հետ...

4

Յեվ վորքան մարդիկ
Կարոտը սրտին
Հյուսիս գնացին,
Անդարձ՝ մնացին:
Անցլալ դարերից,
Են հին աշխարհից
Արդյոք ում հիշել,—
Դեվիս, Ֆրոբիշե՛ր,
Բաֆֆին ու Գուդզոն
Վոր շատ մեծ հուսով՝
Յերկրից հեռացան
Ու լետ չդարձան:
Վորքան թանկագին
Արժեք ե ընկած
Սառցի հատակին.—
Ու թաղված անդարձ:—
Շողողուն, պալծառ,
Վոսկի ու արծաթ,
Պատին ու յերկաթ,
Քարածուխ ու նավթ,
Արձիճ ու անագ
Անհայտ յերկնի տակ:
Յեվ լեթե բացեն
Բևեռը հպարտ,
Կպանեն գանձեր՝
թաղվա՛ծ, սառցապա՛տ...

Կբանան ուղի
Ու կարձ ճանապարհ,
Աշխարհից—աշխարհ
Անցնելու համար...
Ու սրա համար,
Զգտել են համառ
Դեպ բեեռն ի վե՛ր,
Քանի քանիսներ...
Յեվ հիշենք լեթե՛
Դեպեր անցլալից,
Մեր աչքերի դեմ
Կկանգնեն նորից—
Խիզախներ այնքան,
Վոր հիմա չկան:
Անցել են վոտքո՛վ
Նավ ու սահնակո՛վ,
Մենակ են անցե՛լ
Զույգո՛վ, խմբովին,
Ու զոհ են դարձել
Նման Սեղովին,
Վոր չափեց յերկար
Հյուսիսան ուղին,
Բայց վերջը ընկավ
Սառուցե հողին:
... Նորիլեն ահա՛,
Յերկնի արձակով
Թոփչքն իր արավ,
Բուքն իր հորձանքով
Արգելքներ դրավ՝
Ու ցած տապալեց
Յերկնի նավը մեծ:
Ընկա՞ն... մնացի՞ն,

Անհայտ սառուցին...
Նըանք մեն-մենակ
Անլուլս, անձրա՛գ,
Մահու դիրկն ընկան,
Մինչև վոր լեկան,
Փրկեցին կորած
Մարդկանց մոլորած:
Ու նորից մնա՛ց
Բեվեռը անանց...
Անցլալի որոք
Ո՞ւմ հիշել արդուք՝...
Պիրի, Ամունդուե՛ն,
Երիկսե՛ն, Նանսե՛ն,
Մեղո՛վ, Բրուսե՛լով,
Հայոնի Մուսանով:—
Յեվ վորքա՞ն-վորքա՞ն
Մեծ անուններ կան:
Զգտեցին նըանք
Յերաղ բեվեռին,
Անլուլս, անկրա՛կ,
Այդ հետուներին:
Ամեն զնալիս,
Բենոը մարդուն
Դասեր եր տալիս
Ու խիստ խրատում:

*
* *

Այն աշխարհնը հի՞ն—
Հաղթել անզոր եր,
Բեվեռը կրկին
Մեծ ու հզոր եր...

5

Անցան որերը՝
Մարդիկ ու գործեր.
Յեկան նորերը
Ուղեցին վորձել...
Յեկան լենինչան
Ծիծաղկոտ խանդնվ,
Յեկան ստալինյան
Ցասկոտ լեռանդով:
«—Այդ մենք կկազմենք
Ծրագիր լերթի,
Գնանք—կբաղմենք
Յերկրի գագաթին»:
Ասացին նըանք,
Սրտերով կրա՛կ:
«—Մեզ մոտ սլացիկ
Մտքի վառ լույսե՛ր,
Մեզ մոտ գեղեցիկ
Խորհրդալին սե՛ր...
Այդ մենք ենք ձգտում,
Խիսդը մեր հոգում՝
Դեպի գարերը,
Դեպի ապագան,
Դեպի արել՝
Վոսկեշող ներկան:
Միթե՞ կզիջենք
Ու չենք լինի խիստ,
Մեզ հաղթողը չե
Բուքն անհանդիստ:
Թո՛ղ լողան նավեր
Միշտ դեպի բեվեռ...»

Կամը ըստ անք ամուր՝
 Դեմ դիմաց քամուն:
 Հլուսիսը Սառցե՛—
 Մենք պիտի սանձենք:
 — Այդ մարդն եւ անցել
 Անապատ ու ծո՛վ,
 Մարդն եւ ստեղծել
 Կյանքը ժպտացող:
 Ել ինչու մնա
 Իր գործը թերի,
 Մենք պիտի գնանք,
 Հասնենք բեկեռին»:

6

Ու մի որ ահա՛,
 Յերկինքը յելան
 Բազեները մեր,
 Յերկինքը յելան
 Ամպերից ել վե՛ր,
 Դեպի հորիզոն
 Սիրուն յերիզով,
 Թեվ տվին անցան—
 Ու անտես դարձան...

* * *

Թոշում են անան
 Կրծքերով վահան,
 Թեվերով ամուր,
 Առաջ են տանում
 Մեր Խորհրդավին
 Կուռ կամքը դարի՛:
 Շմիդտի նմա՛ն

Զկա աշխարհում,
 Արշավն աննման՝
 Այդ նա յե վարում:
 Յեվ այդ ալեղարդ
 Պետը արշավի,
 Տեսել եւ հազար
 Բուրք ու արհավիքք...
 Թաղ փշի քամին,
 Թաղ սուլի սաստիկ,
 Ի՞նչ ուժ պիտ լինի,
 Վոր նրանց սաստի...
 Զկա՛ վոչ արգելք,
 Վոչ ել վհատում,
 Յերբ կամք կա և խելք՝
 Վստա՛ն ու հատո՛ւ:
 Թոշում են բեկեռ
 Դեպի խոր ձմեռ,
 Ուր չկա դարո՛ւն,
 Ամա՛ռ ու աշուն,
 Ուր չեն դալարում
 Ծառերը նախշուն:
 Ուր չկա անտա՛ռ,
 Զկա՛ քոլ ու քար,
 Զկան բուրացող
 Դարդեր արթնացող,
 Առվակներ հոսուն,
 Լեզվանի, խոսուն:
 Սառուցներն ահա՛,
 Վորպես կուռ վահան,
 Անպարտ բեկեռ՝
 Դարե՛ր ու դարե՛ր
 Իրենց արանքում

Պահում են թաղուն:
Յեվ բարձր—բարձր՝
Փովում ե թանձր
Մշուշող կաթը,
Տակովն ե անցել
Հզոր գագաթը:
Թռչուժ են սիրով
Ամպի ուսերով,
Մեր հերոսները
Հզոր ու արի,
Մեր հերոսները
Պայծառ աշխարհի:
Նրանք չեն թողնի
Մեծ գործը թերի:

7

Ու վոչինչ շկար,
Վոր զսպեր նրանց:
Յեվ նրանք լեկան
Իջան սրբնթա՛ց—
Հաղթութևամբ խնդուն,
Հաջողվեց մարդուն
Անհաս բնեոը՝
Դարձնել մերը...

* * *

Իջան դեպի ցա՛ծ,
Դեպ բեվեոը խոր,
Սառուցը զնդաց
Իր ցուրտ լերախով:
«—Ի՞նչ լավ ե, ասին,
Հասանք հյուսիսին,
Բեվե՛ռ, բարե քեզ,

Ասա, ինչպէ՞ս ես:
Ելստեղ կնստենք,
Յեթէ բարկանաս
Մենք քեզ կսաստենք,
Դու կհասկանաս,
Վոր թուլլ ես արդե՛ն
Ուժեղների դե՛մ,
Կնստենք ամուր
Սառուց կհերկենք,
Կլծենք քամուն,
Ուրախ կյերգենք:
Վրանի դիմաց
Կլնի քամաղա՛ց,
Կարգին բնակարան,
Յեվ ուղիոկայան,
Նույնիսկ թանգարան,

Անգամ տնկարան:
Իսկ գագաթին քո
Կենարոնում ուղիղ,
Մենք այնպես շուքով՝
Քո սառցե հողին
Կցցենք դրոշ,
Ուր պարզ ու վորոշ
Վոսկե տասերով
Կդրենք սիրով.

— Իմաստուն կյանքի
Խոհերով դարի,
Մեծ հալրենիքի
Հերոսներն արի
Նստել են համառ
Հեռավոր կետում,
Գիտութիւն համար

Գալիք են կերտում...
 Դիտության, ուժի,
 Ստալինյան սիրո,
 Մարտիկներն են ժիր
 Խնդուն հույսերով:—
 Ստալինյան կամքով
 Հյուսիս գնացին,
 Խնդությամբ, փառքով
 Բեվեռը բացին:

* * *

Ասին ու արին...
 Յեվ վողջ աշխարհին
 Հայտնեցին նրանք.
 — Բեվեռը առանք,
 Բեվեռը առանք...
 Ալո՛... լսում եք,
 Մենք Հյուսիսումն ենք:

Պատ. խմբ՝ Մկրտիչ Կորյուն
 Տեխ. խմբ. Ան. Գասպարյան
 Սբբագրիչ՝ Հ. Մանուկյան
 Կոհաբող Սբբագրիչ՝ Մ. Մարտիկյան

1937 թ.
 Յերեվան



Գյավիտի լիազոր Ա.-3051 Հըտ 4335
 Պատվեր 1311. Տըրած 4000.
 Թուղթ 62×94 Տ.պ. 1 մամուլ
 Մեկ մամ. 30702. նիշ. Հեղինակային 3/4 մամ.
 Հանձնված և արտադրության 10 գեկտ. 1937 թ.
 Ստորագրված և ապագրության 31 գեկտ. 1937 թ.
 Քինը-80 լ.

Գլուխատի տղարան, Յերեվան. Լենինի փող. 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0399969


11882

44

ФМС 80 ЧП.

9М

1
2



АШОТ ШАЙБОН
АЛЛО! СЛУЧАЕТЕ?
МЫ НА СЕВЕРЕ
ИЗ ССР АРМ. Ереван